ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

ՎՏԱՆԳՆԵՐ[1]

Նյութապաշտը

Նա մեղավոր չէ, որ այնպիսին է, ինչպիսին որ է. դա, ավելի ճիշտ, բնական կանխատրամադրվածության բեռան հետեւանքն է։ Բայց մենք, որ ուրիշ ենք, պիտի հաշիվ տանք այն բանի համար, որ նա մնում է այնպիսին, ինչպիսին որ է։ Հասկանալի է, որ նյութապաշտի մտահորիզոնն ընդլայնելն ու նրա հոգին ազնվացնելը դյուրին գործ չեն, այդուհանդերձ, դրանք պիտի արվեն։

«Գոյություն ունի միայն նյութ եւ, նյութից զատ՝ ուրիշ ոչինչ»։ Սա մի փակուղի է, որի մեջ է հայտնվել եւ որտեղ նա իրեն այնքան լավ է զգում, որ կցանկանար բովանդակ մարդկությանն այդ աշխարհայացքային փակուղու մեջ ներքաշել։ Բանն այն է, որ դա նրան այնքան պարզ է թվում, այնքան ինքնըստինքյան հասկանալի, այնքան «ամեն ինչ բացատրող», որ նա ի վիճակի չէ հասու լինելու, թե մենք՝ ուրիշներս, ինչու չենք ուզում համաձայնել նրա հետ, կտրականապես «չենք ուզում»։

Ահա այսպես է նյութապաշտի շուրջ թյուրիմացության կատակերգություն ստեղծվում. ով այդպիսին է, չի հասկանում՝ ինչպես կարելի է ուրիշ լինել, իսկ ով այդպիսին չէ, ի վիճակի չէ ըմբռնելու՝ ինչպես կարելի է այդպիսին լինել։

Ինչպե՞ս է մարդը նյութապաշտ դառնում։ Սկզբում նա այդպիսին է ի բնե, ապա եւ՝ յուր հոգեւոր եւ մտավոր փորձառության մասին բավարար հոգ չտանելու պատճառով։

Մարդիկ կան, որոնք ասես կառչած են իրենց մարմնին ու մարմնական զգայություններին։ Ասա՛ է նրանց կենսական բովանդակությունների գլխավոր աղբյուրը, նրանց սիրեցյալ «ես»-ի հուսալի ապաստարանը։ Նրանց համար իրական են այն տպավորությունները, որոնք ստանում են

---

[1] *Թարգմանությունը կատարված է* Иван Ильин, Книга раздумий. Я вглядываюсь в жизнь, *Մինսկ, 2014 գրքից։*

տեսողության, լսողության, հոտառության, համի ու շոշափման միջոցով. մնացյալ ամեն ինչի վրա նրանք ուշադրություն չեն էլ դարձնում։ Լուրջ են ընդունվում միայն արտաքին փորձը, արտաքին տեսքը, արտաքին հարաբերությունները։ Կարելի է ասել, որ նրանք դեպի դուրս են շրջված (էքստրավերտ են). ներքին կյանքը նրանց չի հետաքրքրում։ Նրանց հաճույքը զգայական հաճույքն է, զզվանքը՝ կենսաբանական զզվանքը, սերը՝ մարմնական հաճույքը։ Քաղցը, ցուրտը, ցավը, աղքատությունը, ճոխությունը, հաջողությունը հասարակության մեջ, միով բանիվ՝ առերեւույթը նրանց համար ամեն ինչ է։ Նրանք սարսափելիորեն քիչ բան գիտեն սրտի ու խղճմտանքի մասին. պատասխանատվության զգացումը նրանց խռովքի չի մատնում. հասարակականի զգացումն ընդունում են հեգնական ժպիտով. բարին ու չարը հաչս նրանց «նախապաշարմունք է հիմարների համար». իսկ թե ինչ են փորձն ու դիտարկումը մեզ վկայում, այդ մասին դույզն-ինչ պատկերացում էլ չունեն։ Քնարականը նրանց քիչ բան է ասում. ողբերգականը նրանց համար ցրվելու միջոց է. գեղանկարչությունն ու երաժշտությունը նրանց համար ոչ այլ ինչ են, քան հուզական միջոց. նրանք խայտաբղետություն, ցայտունություն, գունեղություն են փնտրում, որքան էլ դա անճաշակ լինի։ Նրանք անկարող են պատկերացում կազմել, թե ինչ են կրոնն ու հավատը, եւ միշտ դրանց ետեւում կեղծիք են տեսնում...

Մոտավորապես այսպիսին է «գործնական նյութապաշտը», իսկ տեսաբանն այս նույն փորձից վերացական անառարկելի դրույթ եւ «աշխարհայացք» է կերտում։ Այստեղից է իսկական կամային երիտասարդը՝ մարքսիստական հեղափոխականն ու մարտնչող աստվածամերժը. արտաքին աշխարհին ուղղված նախանձորդներն ու չարակամ մարդիկ էլ վազում են դրանց ետեւից, իսկ մնացյալ աշխարհը նայում է դրան ու գլուխ չի հանում, թե ինչ կարող է հակադրել նյութապաշտին...

Ա՜խ, ինչ սիրահոժար ես այդ անօգնական մարդկանց փոքրիկ խորհուրդ կտայի՝ մի քանի հակիրճ մանկական հեքիաթ...

Եղել է — չի եղել, մի մարդ է եղել, ով այնքան երկար ու փութաջանորեն էր նայում յուր պատուհանից, որ կորավ նրա մեջ. այժմ արդեն մտածում էր, որ ինքը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատուհան եւ «միմիայն» պատուհան, եւ որ ողջ լույս աշխարհում, բացի պատուհաններից, ուրիշ ոչինչ չկա։ Շուտով նա հոգեբուժարանում հայտնվեց, ուր եւ գտնվում է ցայսօր...

Կար—չկար, մի խելացի խխունջ կար։ Օրերից մի օր հասկացավ, որ առանց յուր խեցիի բնավ ապրել չի կարող։ Դա ծանր հարված էր նրա

համար։ Այդժամ նա ետ սողաց-խցկվեց յուր խեցու մեջ ու այլեւս ոչինչ չէր ուզում իմանալ իր մասին, միայն թե ապրեր խեցին։ Շուտով խխունջը չորացավ նրա մեջ ու սատկեց, իսկ սնամեջ պատյանն ընկած մնաց ճանապարհին, մինչեւ որ հաջորդ առավոտյան բեռնատարի անիվների տակ ճխլտվեց...

Ժուկով—ժամանակով մի հեռավոր երկրում մի հանդուգն տղա էր ապրում, որն Աստծու մասին ոչինչ իմանալ չէր ուզում։ Աստված այդժամ նրան այնպես պատուհասեց, որ այսուհետեւ ինչ էլ տեսներ՝ աչքին մեռյալ նյութ երեւար։ Նրա համար այլեւս ոչ մի ծաղիկ չէր փթթում, ոչ մի նվիրական պատկեր չէր երեւում, խնդությունն էլ դադարեց նրա սրտում երգելուց։ Մեռյալ նյութն ամենուր քմծիծաղում էր նրա վրա՝ անշարժ ու աղքատ, դատարկ ու անշունչ։ Այլք չէին կարողանում հասկանալ, թե ինչ է պատահել նրա հետ, եւ զմայլվում էին ծաղիկներով՝ իրենք էլ զմայլանքով ծաղկելով։ Այդժամ տղան խոր վհատության մեջ ընկավ ու ինքնասպանություն գործեց...

Այլանդակ ու կույր սեւաթույր տնապայը (տան ոգին) կամենում էր մարդկությանը այլանդակ ու կույր դարձնել եւ կախարդեց ֆշշան թույնով լի կաթսան։ Այդժամ նվիրյալ ու քաջարի մարդիկ ի մի հավաքվեցին ու շուռ տվեցին այդ կաթսան՝ այդ թույնից ազատելով բարի մարդկանց...

Բանն այն է, որ բարի մարդկանց գործերը ե՛ւ ավելի լավն են, ե՛ւ ավելի ազնիվ, քան կույր նյութապաշտի թշվառ ու չար ծանծաղությունները...

Անաստվածություն

«Թե որ ձեր Աստվածը գոյություն ունի, ցո՛ւյց տվեք մեզ նրան։ Ո՞ւր է նա։ Ո՞ւր է այն տեղը, որտեղ նա հաստատվել է։ Եւ ոչ մի տեղ։ Հեռադիտակները նրան չեն հայտնաբերել։ Հետեւաբար ավելի լավ չէ՞ դադարեցնել այսօրինակ դատողությունները»։

Սույն մեծապես հանդուգն հարցին հարկ է անպայման պատասխան տալ հասարակ, պարզ, գիտական ու ստույգ լեզվով։ Մենք առանց այդ էլ բավական երկար ենք ձգձգել մեր պատասխանը։

Որտե՞ղ է գտնվում ձեր Աստվածը։ Եթե այդ «որտեղ»-ի ներքո ենթադրենք ինչ-որ որոշակի մի տեղ տարածությունում, ապա Նա ոչ մի տեղում էլ չէ։ Բայց դուք, պարոնա՛յք անաստվածներ, այդուհանդերձ, պիտի ընդունեք, որ կան իրույթներ, որոնցով զբաղվում է դրական (պոզիտիվ, նաեւ՝ փորձի՝ փաստերի վրա հիմնված) գիտությունը, որոնք, սակայն,

այդուհանդերձ, տարածականորեն գոյություն չունեն։ Սրանք առարկաներ են առանց «ուր»-ի, առանց նստավայրի, կեցավայրի եւ բնակավայրի, որոնց հանդեպ կիրարկմամբ անիմաստ են դառնում մանրադիտակն ու հեռադիտակը, հյուլեական կշիռն ու քիմիական բանաձեւը, որոնցով, այնուամենայնիվ, զբաղվում են ամբողջ մասնաճյուղեր։ Ապա փորձե՛ք, պարոնա՛յք, ձեր «ուր»-ով դիմել իրավաբաններին (մոտավորապես այսպես. պետք է մանրադիտակով զննել առքը, վարձով տալը, ընտրության իրավունքը) կամ մաթեմատիկոսներից պատասխան ստանալ (մոտավորապես այսպես. «Տարածության մեջ որտե՞ղ է գտնվում աճի փոփոխականը կամ հաստատուն մեծությունը»), դիմեք հոգեբաններին հոգու տեսակարար կշռի հարցով, տրամաբանին էլ տանջեք ձեր սույն հարցով՝ կարո՞ղ է նա հեռադիտակով տեսնել հասկացությունը։ Սա ձեզ համար խայտառակություն կլինի, իսկ ցանկացած ուրիշի համար՝ անիմաստ բան։ Այսպես ուրեմն, վերջ տվեք «ուր»-ի մասին ձեր շաղակրատանքներին։

Եւ փրկվե՛ք, պարոնա՛յք։ Ավելի ճիշտ՝ փոխե՛ք ձեր անզգույշ հարցը։ Լա՛վ, շա՛տ լավ։ Հիմա դուք կհարցնեք՝ արդյոք աստվածճանաչողությունը որոշակի փորձի հիման վրա՞ է խարսխված, եւ արդյոք այդ փորձը մատչելի՞ է բոլորին։

Այո՛, իհարկե, այդպիսի փորձ գոյություն ունի, եւ ինչպես ամենայն փորձի պարագայում, նրա մասին պետք է հոգալ ու կատարելագործել։ Ուստի նա մատչելի չէ բոլորին։ Մոտավորապես այնպես, ինչպես ընդունված է գիտության ու արվեստի բնագավառում. բարձրագույն դպրոցի ունկնդիրը երեք, չորս, հինգ տարի շարունակ հոգ է տանում յուր փորձառության մասին ու կատարելագործում, որ ճիշտ գիտակցի ու ըմբռնի ինչ-որ բան, իսկ դուք կամենում եք առանց որեւէ նախապատրաստվածության դատողություններ անել Աստծու մասին։ Ո՞վ է ձեզ ներշնչել այն թյուր կարծիքը, որ ամեն մարդ օժտված է ճիշտ դատողություն անելու շնորհով։ Ո՞վ է ամենագետ ամեն ինչում։ Ո՞վ է իրեն ամեն բնագավառում զգում այնպես, ինչպես տանը։ Ուսումնասիրում ու սովորում են թիթեղագործն ու կոշկակարը, իսկ դուք հոգու ամենախորին ու ամենանրբին ոլորտում խնդիրը մի հարվածով եք լուծել կամենում։

Այս ինչ փորձ է։ Ես հարկադրված անհապաղ պիտի ուղեկցեմ ձեզ նախասենյակ, որտեղ եւ կլքեմ ձեզ, քանզի անդ սկսվում են ինքնուրույն կյանքն ու ճանաչողությունը, անդ հարկ է անմնացորդ անձնատուր լինել, բանալ յուր սիրտը, բացել հոգեւոր ակնը, զգալ, սերտել, ըմբռնել,

ստեղծագործաբար արարել... Անդ անհրաժեշտ է սեփական հոգու մասին հոգալ ու մաքրագործել այն։

Այդ փորձառությունը սիրուց է սկիզբ առնում։ Ով այն չունի, ով միայն ատելություն է քարոզում, կմնա դռան ետեւում։ Սերը, սակայն, պետք է լինի իսկական, ի սրտե, անկեղծ։ Աստ չի օգնի տաքուկ կեղծավորությունը։ Այս սերը պիտի գործ ունենա որակի՝ իսկական, ոչ շինծու որակի հետ, կատարելության հետ. ամեն ինչում՝ բնության ու արվեստի մեջ, մարդկային փոխադարձ հարաբերություններում, գիտության եւ հասարակարգի մեջ։ Անդ, ուր խաչաձեւվում են սերն ու որակը, ուր սերն առ կատարելություն բոց է դառնում, անդ սկսվում է կրոնական փորձառությունը, անդ մարդը գտնվում է Տիրոջ շողի մեջ, անդ մարդը համարձակվում է նախասրահից սենյակներ անցնել։ Իսկ մեզ թույլ չի տրվում բացահայտել նրա համար այն, ինչ ինքը պիտի վերապրի դրանց մեջ։

Իսկ թե այդ բանն անել չեք կամենում, պարոնա՛յք, ուրեմն գնացե՛ք ձեր ճանապարհով, բայց բարեզո՛ւսպ եղեք եւ դատողություններ մի՛ արեք այն ամենի շուրջ, ինչը գերիվեր է ձեր կարողություններից։ Այլապես, լա՛վ իմացեք՝ նորից կխայտառակվեք։

Նախանձ

Բարի ու չար հավերժահարսերը մոտեցան մարդու օրորոցին եւ մատուցեցին նրան իրենց ընծաները։ Դրանցից ամենաչարը նրան նախանձ ընծայաբերեց։ Հավանաբար, նա ֆուրիա[2] էր։

Քանի դեռ մարդիկ ապրում են այս աշխարհում, պիտի հաշտ ու համերաշխ լինեն, դեպի մեկը մյուսին տանող ուղին գտնեն, միավորվեն, օգնեն իրար։ Այլապես գետինն իրենց ոտքերի տակ եւ երկինքը գլխավերեւում փուլ կգան։ Իսկ փլուզման-անհամերաշխության ամենահզոր միջոցը նախանձն է՝ անցյալում «Բաժան-բաժանի» եւ «Մեկն ընդդեմ մյուսի» վարպետի ձեռամբ հորինված։

Հաշտ ու համերաշխ ապրելու համար մարդիկ պիտի սովորեն «ներել» մեկը մյուսից տարբեր լինելը, առավելություններն ու գերազանցությունները։ Եւ ոչ միայն ունեցվածքի, այլեւ ամեն առումով. դու խելացի ես, շնորհալի, ուսյալ, գեղեցիկ, ուժեղ, հարուստ, պաշտոնով ինձանից

[2] *Ըստ հռոմեական դիցաբանության՝ վրիժառության դիցուհիներից յուրաքանչյուրը, փխբ. չար, նախանձ կին։*

ավելի բարձր ես, իսկ ես՝ ոչ, դու վերեւում ես, իսկ ես՝ ներքեւում, լա՛վ, ես ընդունում եմ դա, ես բավարարվում եմ այդու... Իմ «ներքեւն» ինձ ձեռնտու է, այն ինձ համար բավականին «բարձր» է. ինձանից բա՛րձր եղիր, եթե կարող ես, եւ եթե դա քեզ հաճո է։ Ես քեզ չեմ նախանձում։ Իսկ թե որ իմ «ներքեւն» ինձ չբավարարի, կպայքարեմ առավել «մեծի» ու «լավի» համար, բայց՝ չկամենալով այն խլել քեզանից։ Ես կշարշարվեմ, ստեղծագործաբար կաշխատեմ, ինձ մրցակցության մեջ «վեր» կտեղափոխեմ, բայց՝ առանց նախանձի։ Դու «վերեւում» էլ մնա, իսկ ես կհասնեմ քեզ։

Մրցակցությունը՝ իբրեւ ներքին դրդապատճառ, առողջ, ստեղծարար, եղբայրական երեւույթ է։ Նրա բանաձեւը ողջամիտ ու բարոյական է։ Նա հռչակում է. «Ե՛ւ ես, ե՛ւ դու, ե՛ւ նա։ Մենք՝ բոլորս։ Միասին՝ հակառակ միասնաբար իրար դիմակայելու։ Կեցցե՛ որակը»։

Նախանձը՝ իբրեւ ներքին դրդապատճառ, ընդհակառակը, հիվանդագին է, թշնամական ու ավերիչ։ Նրա բանաձեւը ողջամիտ ու բարոյական չէ։ Նա հռչակում է. «Ե՛ս, եւ ոչ թե դու, եւ ոչ էլ նա։ Միայն ես։ Բոլորդ էլ կորե՛ք։ Այն, ինչ իմը չի դառնա, թող գրողի ծոցը գնա»։ Իսկ քանի որ միայն դույզն-ինչը կարող է «իմը» դառնալ, ապա չմոռանանք, որ նախանձի մեջ նիրհում է սպանության ու ավերածության բնազդը։

Նախանձը նախ եւ առաջ ժլատություն ու ագահություն է։ Նա, ինչպես հետաքրքրասիրությունը, անհագ է, այսինքն՝ հավերժական աղքատություն, հավերժական հոգս, հավերժական վատ տրամադրություն է։ Նա ամենայն հաջողություն վերածում է անհաջողության եւ թողնում, որ մարդն անմխիթար միայնության մեջ կործանվի։ Անագորույն նախանձորդը չարակամ է. ուրիշի երջանկությունը խռովեցնում է նրան, վիրավորում է ուրիշի ամենայն հաջողություն, տանջում, ինչպես սրտի վերքը, ուրիշի ամենայն դրական որակ. մի բանից զրկվելիս ցասումով է համակվում այդ բանն ունեցողի հանդեպ, ինչպես թերարժեք մարդու կատաղությունը, որը միշտ զգում է յուր թերարժեքությունն ու այդ պատճառով աչառությամբ նկատում ուրիշի գերազանցությունը։ «Գործին» նա նույնիսկ չի էլ մոտենում. նա լռվում է «ես»-ի ու «դու»-ի միջեւ պայքարում, եւ այդ հավերժական պայքարում հալումաշ անում ե՛ւ ինքն իրեն, ե՛ւ յուր թշնամուն։ Իսկ երբ նրա կատաղությունն ընդարձակվում է մինչեւ հասարակական ծրագիր, այդժամ այն դասակարգային պայքարի կերպարանք է առնում, եւ մարքսիստական քաղաքացիական պատերազմ է բռնկվում։

Արդ, որտեղ են փրկությունն ու մխիթարությունը։ Չնախանձելու արվեստի մեջ։ Դա բնավ դժվար չէ։ Ընծայիր յուրաքանչյուրին այն, ինչ նա առանց այդ էլ ունի, եւ անդադրում մի՛ փորփրիր սեփական թերարժեքությունդ։ Դե՛ն նետիր ուրիշի կարծեցյալ «գերազանցությունից» քո թվացյալ «փոքրությունը» հանելու ողորմելի գործողությունը։ Գիտցի՛ր՝ ինքդ էլ տեղով մի «գումարում» արժես։ Վե՛ր բարձրացիր՝ այլոց ցած չգլորելով։ Մի՛ նախանձիր։ Մի՛ նախանձիր։ Եւ ամենակարեւորը՝ սովորի՛ր մեծ գործում ուրանալ անձդ։

Դանձնապաստանություն[3]

Այն եղել է բոլոր ժամանակներում, սակայն երբեք այսքան տարածված չի եղել։ Ամեն ինչ գռեհկացնող հանրայնացման, կիսագիտության եւ կիսակրթության ժամանակաշրջաններն են, որ կյանքի կոչեցին այս տիպի մարդուն։ Նա երեւակայում է, թե ինքը խելացի ու լրջմիտ է, թե ամեն ինչ հասկանում է, թե գիտի «դա» եւ դեռ ինչ-որ բան էլ, թե կարող է «այն» եւ դեռ այլ շատ բան։ Վերջապես, նա «ամեն ինչ» կարող է։ Եւ հենց այս մեն-մի պատճառով էլ բղավում է, քամահրում բոլորին, անկյուն քշում, խայտառակությամբ նշավակում։ Նա ինքնավստահ է ու փքված եւ ապշեցնում է արար աշխարհը. նրան, հավանաբար, կարող էր վայել լինել միմիայն համաշխարհային ցնցումը։ Ավելի քչով հազիվ թե նա բավարարվեր։

Ինչ ասես, որ «չգիտի»։ Նրա համար դժվարություններ ու գաղտնիքներ գոյություն չունեն. ամեն ինչ տափակ ու պարզունակ է։ Աստծու գոյության հարցը վաղուց լուծված է։ Հայրենիքն ու ազգասիրությունը նախապաշարմունք են։ Մասնավոր սեփականությունը՝ հափշտակություն ու չարաշահում։ Մարդը բղջախոհ արարած է։ Գիտությունը՝ դասակարգային խաբեություն։ Ազատությունը միայն ռամկամիտ ամբոխի համընդհանուր գռեհկացումն մեջ է։ Եւ, առհասարակ, աշխարհը պիտի խոնարհվի եւ ծպտուն չհանի։

Հասկանալի է, բոլորը չէ, որ կարող են հավասարապես ուսյալ ու հավասարապես համեստ լինել։ Շատերը քիչ բան գիտեն։ Լավ։ Բայց ահա մեկը քիչ գիտի եւ չի էլ կասկածում այդ մասին. այդպիսին միամիտ է։

[3] *Յուր անձին ապաստանող, նա, որ շատ մեծ կարծիք ունի յուր ուժերի մասին, յուր մասին մեծ համարում ունեցող, մեծամտություն, ամբարհավաճություն, ինքնահավանություն։*

Մեկ ուրիշը նույնքան քիչ գիտի, ինչպես եւ առաջինը, սակայն երեւակայում է, որ շատ ու ստույգ գիտի, ինչը նշանակում է, որ նա անձնատուր է եղել մեծամտությանը։ Միամիտը դեռ չի էլ մտորել իր իսկ մասին. իր սեփական մտավոր կարողությունը եւ իշխանությունը՝ իրենց սահմաններով հանդերձ, նրա համար դեռ խնդիր չեն։ Մեծամիտը, ընդհակառակը, ինքն իրեն վահանի վրա է բարձրացրել[4]։ Նա անսահմանորեն գերագնահատել է յուր հնարավորությունները։ Նա սխալ է շրջագծել իր սահմանները։ Վեհության մոլուցքը[5] որդի պես ուտում է նրան ներսից։

Մեզանից ամեն մեկը պետք է առողջ վստահություն տածի իր անձի նկատմամբ («այն, ինչ ես կարող եմ՝ հաստատ կարող եմ»). ոչ մեկին էլ օգտակար չէ հոռի ամբարտավանությունը («ես ավելին եմ, քան կամ»)։ Մեծամտությունն առաջանում է պատրանքից. բայց չէ՞ որ պատրանքի վրա ոչ մի ճիշտ բան չես կառուցի, իսկ այն, ինչ, այնուամենայնիվ, կառուցվում է նրա վրա, փտած ու փխրուն է։

Այսպես ուրեմն, կարծես թե հպարտությունը ստեղծվել է այն բանի համար, որ ինքն իրեն պատժի։ Յուր վտանգները նա իր մեջ է կրում. նրա ծանր հետեւանքները յուր մեջ են ննջում։ Նրա դատողությունների տկարությունը, նրա ամբարհավաճությունը, նրա արմունկների հիմար ու հանդուգն գործելակերպը՝ սրան-նրան հրելով ճանապարհ բանալը, նրան կործանման են տանում։

Ողջամիտը հաճախ է կասկածանքով քննում իր խելքը. նա միշտ շոշափում է իր սեփական սահմանները, իսկ գտնելիս փորձում դրանք ընդլայնել հարստացնելով, այլ ոչ թե դրանց վրայով մեքենայորեն քայլափոխ անելով՝ անցնել. նա վարժվում է դատողությունների խստակրոնության մեջ։ Ընդհակառակը, հիմարի մտքով նույնիսկ չի էլ անցնում, որ ինքը կարող է հիմար լինել. իր մանրությունը նա ճշմարիտ մեծություն ու լրություն է համարում, եւ պատիժը կրնկակոխ հետեւում է նրան։

Սա կոմունիստական պետության իրական ճակատագիրն է։ Ծնվելով ամբարտավանությունից, քանզի մարքսիզմը նախեւառաջ հոգեւոր եւ տնտեսական ամբարտավանություն է, նա ընկնում է բոլշեւիկյան

---

[4] *Սպարտայի կանայք իրենց ամուսիններին պատերազմի ճանապարհելիս բարեմաղթում էին վերադառնալ վահանով (այսինքն՝ որպես հաղթող) կամ վահանի վրա (այսինքն՝ փառքով, մեծարանքով ռազմի դաշտում ընկած)։*

[5] Վեհության մոլուցք — *անձի վարքի կամ ինքնագիտակցության տեսակ, որն արտահայտվում է սեփական համբավի, կարեւորության, ժողովրդականության, հանճարի, քաղաքական ազդեցության, ընդհուպ մինչեւ ամենակարողության եւ այլնի ծայրահեղ գերագնահատմամբ։*

բիրտության եւ կոմունիստական վեհության մոլուցքի մեջ։ Նրա պատիժը իր իսկ մեջ է ննջում, ինչը նշանակում է որակի կորուստ կյանքի բոլոր անդաստաններում։

Ամբարտավանությունից փրկություն չկա։ Նա պիտի անցնի առարկայականության դժնդակ դպրոցի միջով. նա պետք է սովորի առաջին քրիստոնեական առաքինությանը՝ խոնարհությանը, ու յուրացնի այն։ Բանն այն է, որ խոնարհության մեջ է մարդն աստիճանաբար դառնում այն, ինչ իրականում պետք է լինի։ Նրա առաջ բացվում են բարձրությունն ու խորությունը, նա կանգնում է Աստծու առաջ եւ իրեն զգում Աստծու ձեռքում։ Այդպես են միայն աճում նրա ճախրանքի թեւերը, եւ նա դա զգում է՝ առանց հպարտության մեջ ընկնելու։

Միասնական երազանք

Երբ ժամանակ առ ժամանակ հետեւում ենք մեր երազանքներին ու փորձում, այնուամենայնիվ, ինչ-որ կերպ «բացատրել» եւ «ըմբռնել» դրանք՝ անհանգիստ կերպով հարցեր բարձրացնելով ու անօգնականորեն խորհուրդներ տալով, ապա նպատակահարմար ու ողջամիտ կլինի քննել միասնական երազանքն ու անսխալ մեկնաբանել։ Թեկուզ հեքիաթի հերոսի նման, որը, ականջը խոնարհելով գետին, փորձում էր լսել հեռավոր դոփյունը։

Հազարամյակների հոլովույթում ցավ ու չարչարանքով կրում ենք մեր շալակին դրված կյանքի բեռը, իսկ գիշերային տեսիլքներում եւ տրունջական անուրջներում մեզ այցելում է կյանքի քաղցրասուն ու մխիթարող ուրախությունը։ Այն ամենին, ինչ ծանրածանր ու հոգեմաշ է, մենք ոչ միայն հակադրում ենք «թող այն կորչի» առօրեական բարեմաղթանքը, այլեւ կիսագիտակից պատկերացումն առ այն, թե «ինչպես այն կարող էր եւ պետք էր միանգամայն այլ կերպ լինել»։

Մեր ժամանակը սուղ է այդ երջանիկ ու բաղձալի «միանգամայն այլ կերպ լինելու» մասին մտորելու համար, մեր երեւակայությունը նույնպես չափազանց սահմանափակ է՝ նրա պատկերը ստույգ կերտելու համար։ Իսկ թե փորձենք հարցում անցկացնել, թե ինչպես են մարդիկ պատկերացնում ցանկալի «երջանկության համընդհանուր վիճակը», ապա պատասխանները, թերեւս, առանց բացառության բացասական կլինեն. ահա եթե անհետանար ամենայն անախորժը, տաղտկալին, ամոթալին,

հոգնեցուցիչը, եւ ի հայտ գար թեկուզ ոչ հստակ, սակայն «հակոտնյան», այդժամ «այն աստ է»։ Մարդու անգիտակցականը սարսափում է տրտմությունից ու երազում ուրախության մասին. նա միաժամանակ կրքոտ ու միամիտ է, անհագ ու դյուրահավատ, նախնադարին հատուկ պարզունակ է յուր մղումներում եւ մանկամիտ յուր հավակնություններում ու ակնկալիքներում։ Նա չի խորհրդածում, ապրում է յուր ոչ պարզորոշ երազանքներում եւ դյուրահավատորեն ականջ դնում երջանկության մասին մշուշոտ հեքիաթներին։ Նա «անհրաժեշտի» կամ «անհնարինի» մասին, «կարիքի իշխանության», «անխոնջության հաղթանակի», դեպի «հզորագույն դիմադրության» կողմ ընթացող ստեղծագործական շարժման մասին լրջմիտ ճառեր չի սիրում. այս ամենը՝ բանականության եւ կենսական իմաստության լեզուն, հաղթանակած հոգու բախտաբաժինն էլ կմնա։

Այսպես, վաղնջական ժամանակներից ի վեր միասնական գիտակցության կրողը երազում է երջանիկ «ոչ մի տեղի», ուտոպիական[6] հեքիաթային երջանկության, կաթի գետերով ու անուշապուրի ափերով երկրի մասին, դրախտի մասին, ուր միայն ուրախություն, վայելք եւ բացարձակ արդարություն կան, իսկ մնացյալ ամեն ինչ՝ տկարությունը, ցավն ու հիվանդությունը, աշխատանքն ու հոգսերը, սովն ու կարիքը, արգելքն ու մեղքը, ոճիրն ու պատիժը, հարկադրանքն ու անարդարությունը, մեկընդմիշտ վերացած կլինեն։ Երբեմն սույն երազանքը վերաբերում է անցյալին. այսպես արդեն մեկ անգամ եղել է «Եդեմում» (բառացիորեն նշանակում է՝ երանություն), ապա կորսվել, երբեմն էլ վերաբերում է ապագային, որում մեզ «ոսկեդարն» է սպասում կամ «հազարամյա թագավորությունը», որ մեզ «ոսկեդար» է խոստանում կամ «հազարամյա թագավորություն» (հուն. խիլիազմ /χιλιασμός/ կամ լատ. millenarismus*)։*

Ոմանք սույն երազանքի կատարումը տեսնում են անդրաշխարհում, մյուսները՝ այսրաշխարհում։ Հավատը՝ առ հանդերձյալ աշխարհ, մարդկանց հույս, հոգեւոր լուսավորություն ու համբերություն է պարգեւում, այնինչ մանկամիտ-երկրային «հեռանկարները»

---

[6] Ուտոպիա — *բառացի նշանակում է տեղ, որը չկա։ Առաջին անգամ բառը գործածել է Թ. Մորը (1478–1535)՝ ուտոպիական սոցիալիզմի հիմնադիրներից մեկը, իր մտացածին կղզու առնչությամբ, որտեղ պիտի ստեղծվեր կատարյալ հասարակություն՝ ընդհանուր ունեցվածքով, պարտադիր աշխատանքով եւ արդյունքների հավասար բաշխմամբ։*

կարող են միայն անհամբերություն, հեղափոխական խմորումներ ու հիասթափություններ առաջացնել։

Երկրային միասնական երազանքների աշխուժացման դարը սովորաբար հուզումների ու խռովությունների ժամանակաշրջան է։ Այդ ժամանակ թվում է, թե հոգնածությունն ու վհատությունը տիրել են միասնական հոգուն. ասես այս երազանքը լուրջ են ընդունում ու հանդգնում այն կյանքի կոչել. ասես միասնական հոգու «համբերությունը» «սպառվել» է, ասես այլևս ի զորու չէ տոկալ ու համբերել։ Ապա հրապարակ է գալիս սուտ «մարգարեների» ամբոխը՝ «միասնական հոգու» անունից խոսելու եւ նրա ճշմարիտ շահերը ներկայացնելու նկրտմամբ։ Երբեմն էլ այդ միամիտ երազողները՝ այդ նույն երազանքի կրողներն ու կույր խանդավառությամբ բռնվածները, կրոնաազանդավորական սադրիչ գործողությունների են ձեռնամուխ լինում։ Բայց առավել հաճախ դրանք փառասեր ամբոխավարներ են, որոնք չար ու վտանգավոր խաղեր են խաղում միասնական հոգու հետ։ ԺԹ. դարը մեզ հակակրոնական, անաստված «հազարամյակ» հրամցրեց՝ անդրաշխարհի մասին ոչինչ իմանալ չկամեցող եւ այս՝ երկրային աշխարհին կառչող։ Նա անհամբերություն է քարոզում եւ վարքագծով ավերիչ է. միասնական երազանքը հրապուրելով տանում է իրական աշխարհ։ Մի քանի տասնամյակ շարունակ մարքսիստական «մարգարեները» տատանվում էին «աստիճանականի» («էվոլյուցիայի») եւ «միանգամիցի» («ռեւոլյուցիայի»), «հարգալիցի» եւ «անարգի» միջեւ, մինչեւ որ հաղթեց առավելամոլական (մաքսիմալիստական) քիմեռի ծածուկ մեխանիզմը։ Արդեն քսան տարի է անցել այն օրից, ինչ բովանդակ աշխարհում առանց քաշվելու ողջունում, խրախուսում ու փչելով արծարծում են միասնական երազանքի հուրը, անիրականալի երազանք-բաղձանքի հետ վարվում են ինչպես «մոտ իրականության» հետ՝ այլեւս հաշվի չնստելով բնության եւ մարդկային էության անխախտ օրենքների հետ։ Այսօր այս կոչին արձագանքում է կրոնական առումով կիսով չափ մարած միասնական հոգին, որը դեռ հիմա էլ հույսեր է փայփայում հաջողությամբ հինավուրց երազանքը իրական կյանքի վերածելու...

Ինչ սարսափելի զարթոնք է նրանց սպասում։ Ինչ կպատահի ժամանակակից աշխարհի հետ, եթե նրան չհաջողվի թովել «հազարամյակից» ձերբազատված միասնական հոգին նոր հոգեւոր եւ հասարակական

գաղափարներով։ Եւ որտեղ գտնի այդ ստեղծագործական գաղափարները, եթե չկամենա անսալ քրիստոնեական հայտնությանը։

Քաղաքացիական պատերազմ

Այդ օրը բոլորս միասին էինք։ Մեր մշտական սեղանի շուրջ շատ մարդ էր բազմած. բոլորը լսում էին բարի համբավ վայելող մի անծանոթ տարեց պարոնի։ Հավանաբար անգլիացի էր։ Ազնիվ, դույզն-ինչ հոգնած դիմագծերով, խելացի եւ վառվռուն աչքերով, վճռականություն արտահայտող կզակով եւ ճակատին երկու մեծ սպիով այր էր։ Նա շատ բան էր տեսել, անձամբ մասնակցել օտար երկրներում երեք քաղաքացիական պատերազմների, բավական դանդաղ էր խոսում՝ ներքին համոզմունքով, հակիրճ՝ ասույթների մեջ առնված արտահայտություններով։ Ինձ հաջողվեց նրա ասածներից մի քանի բան գրի առնել, ինչն այժմ վերարտադրում եմ ծոցատետրիցս։

«Քաղաքացիական պատերազմը ատելության ժայթքում է, որին հետեւում է համատարած հրո ճարակը։ Հաճախ են անուշադրության մատնում, թե ինչպես եւ երբ է ատելությունը հունցվել. հենց նույն պատճառով էլ տպավորություն է ստեղծվում, թե փոթորիկը պարզ օրով ճայթեց։ Իսկ իրականում ատելությունն ու հալածանքը վաղուց է, ինչ մոլեգնում էին։ Չէ՞ որ դասակարգային պայքարը քողարկված քաղաքացիական պատերազմ է, իսկ քաղաքացիական պատերազմը՝ անթաքույց, անողոք դասակարգային պայքար։

Քաղաքացիական պատերազմը նման է համաճարակի. դա ատելության հոգեգարություն (պսիխոզ) է, որն ավելի ու ավելի հեռու տարածվելով՝ հասարակության նորանոր խավեր է ընդգրկում։ Այս հոգեգարությունը ճիշտ հասկանալու համար հարկ է դառնալ միջին դարերին՝ սարսափելի ժողովրդական հիվանդությունների, ժանտախտի, սուրբ Վիտտոսի կայթի[7] ժամանակներին եւ այլն։ Տպավորություն է ստեղծվում, որ մարդիկ այնպես են վարակում իրար ատելությամբ ու քինախնդրությամբ, որ բոլոր բարոյական արգելակներն ու հասարակական հիմքերն

[7] *Կաթոլիկ եկեղեցու այս սրբի անունով է կոչվում ամենախորհրդավոր համաճարակը Եւրոպայում, որն ուղեկցվում էր անկանոն շարժումներով ու աշխուժությամբ։ Առաջին իսկ վտանգավոր ախտանշանների ի հայտ գալուն պես մարդիկ սկսում էին ջղաձգային շարժումներով ու անհոդաբաշխ աղաղակներով ուղեկցվող պարը սուրբ Վիտտոսի արձանի մոտ՝ հույսով, որ այդ արարողությունը սրբի բարեխոսությամբ կօգնի նրանց զերծ մնալ այդ մահաբեր համաճարակից։*

աստիճանաբար կաթվածահարվում են կամ լրիվ դեն նետվում։ Այդժամ հրճվում է չար կամքը։ Ոչ ոք այլեւս հաշտվելու մասին չի էլ մտածում։ Ժողովրդից սերած ընկերն այլեւս ընկեր չէ։ Ազգամիջյան պատերազմի թշնամին երբեք այնպիսի ատելության չի արժանանա, ինչպես թշնամի համերկրացին քաղաքացիական կռիվների ընթացքում։ Ոչ մի այլ տեղ թշնամուն ոչնչացնելու համար այնքան ջանք չեն գործադրում, ինչպես աստ, ուր հաճախ են գերիներին սպանում, ուր ոչ հազվադեպ կարելի է հանդիպել մարդկանց, որոնք պարծենում են իրենց ձեռամբ սպանված թշնամի-համաքաղաքացիների քանակով։

Քաղաքացիական պատերազմը նման է երկրաշարժի. ամեն ինչ ցնցվում է, ամեն ինչ փլուզվում այն տարբերությամբ, որ մարդիկ իրենք են առաջացնում այդ անվերջանալի ցնցումներն ու մղեգնում դրանց մեջ։ Ըստ մեծ փիլիսոփա Հոբսի՝ մարդը մարդու համար գայլ է դառնում։ Կարգուկանոնի եւ անվտանգության մասին այլեւս խոսք իսկ լինել չի կարող։ Փոխադարձ վստահությունն անհետանում է։ Բոլորը նկրտում են այլ կերպարանք ընդունել եւ թաքցնել իրենց իրական համակրանքները։ Բոլորը տրամադրված են երկակի նմանակմանը՝ կիսով չափ անկեղծորեն դրվատելով մերթ մի, մերթ մյուս ժամիշխանի[8]։ Թշնամին ամենուր է, եւ ամեն կողմից գաղտնի իրազեկումներ են սպառնում։ Ամեն տեղ քեզ թաքուն ականջ են դնում, նախանձում են, ատում ու սպառնում։ Գլուխ են բարձրացնում հոռեգույն կրքերը, մոռացված թշնամանքն ու տենչում դուրս հորդել։ Դա համատարած դավաճանության ու բիրտ կերպով հաշիվներ մաքրելու ժամանակ է։ Դա նաեւ բարոյականության համատարած անկման ժամանակ է։ Օրենքները լռում են կամ հարափոխվում։ Իրավագիտակցությունն ընկրկում է ու հանձնվում։ Ոչ ոք չգիտի, թե ինչն է օրինաչափ, ինչը՝ անհրաժեշտ, ինչը՝ կարելի, ինչը՝ ոչ։ Հանցագործները գործում են բացահայտ, լկտի ու բիրտ կերպով։ Նրանք ձգտում են հարել երկու ճակատներին էլ, ինչը եւ հաջողվում է նրանց. նրանք թափանցում են ամենուր ու իրենց կողմը գրավում բարոյապես թույլերին։ Ուստի դա մեծ ու փոքր արկածախնդրության ժամանակաշրջան է։ Քաղաքացիական կռիվների այս արկածախնդիր այրերի բնությունը հասկանալու համար պետք է նրանց ուսումնասիրել անմիջականորեն, անձամբ. դրանք փառասեր ու իշխանատենչ մարդիկ են, միանգամայն արմատազուրկ, բարոյազուրկ. դրանք քաղաքացիական

[8] Ժամիշխան — *ժամանակավորապես կամ պատահականորեն իշխանությունը գրված անձ։*

կռիվներն իրենց մասնագիտությունն են դարձրել. հարազատ ժողովրդի աղքատությունը նրանց չի հուզում. երկրի համատարած քայքայումը չեն նկատում. անտարբեր են ազգային մշակույթի նկատմամբ։ Դրանք ազգություն չճանաչող եւ դավանանք չունեցող արարածներ են, որ տարված են միայն դիրքի ու պաշտոնի մոլուցքով եւ ընտելացել են արյան մեջ լողանալուն։ Դրանց համար միևնույն է, թե որտեղից եւ ինչ եղանակով են փող կուտակում։

Այսպես երկիրը, որում քաղաքացիական պատերազմ է ընթանում, ամայանում է, ինչպես մորեխի ասպատակությունից, ավերվում, ինչպես երկրաշարժից։ Եւ որքան խիտ է բնակեցված երկիրը, այնքան վայրագ է մոլեգնում քաղաքացիական պատերազմը։ Միայն կատաղի հարձակումն է աստ հաղթանակի գրավականը... Հարձակո՞ւմ։ Ո՞ւմ վրա։ Սեփական հայրենակիցների... Գայթակղված, սադրանքի ենթարկված ու կուրացած համաքաղաքացիների վրա...

Հազիվ թե սեփական Հայրենիքի նկատմամբ ավելի վատթար չարագործություն գոյություն ունենա, քան քաղաքացիական պատերազմի սանձազերծումը։ Իսկ ով չի կամենում այլոց սխալներից ուսանել, թող գոնե պատկերացնի, թե ինչ պատասխանատվություն է անձամբ կրելու։ Այս առումով երեք նախազգուշական խնդիր կա. չի կարելի թույլ տալ, որ ժողովրդի մեջ հասարակական ատելություն կուտակվի. չի կարելի թույլ տալ, որ այն հուսահատության վերաճի. չի կարելի թույլ տալ, որ հուսահատությունը քաղաքացիական պատերազմի սանձազերծման հանգեցնի։ Արդյոք չի՞ կարելի երջանիկ համարել այն երկիրը, որտեղ սույն խնդիրները գտել են իրենց ճիշտ լուծումները»...

Այդ օրվանից ի վեր արդեն վեց տարի է անցել, իսկ ես դեռ լսում եմ այդ հռետորի ձայնը եւ քար լռությունը՝ հաստատված անգլիացու ճառերից հետո։ Վիճաբանելու ցանկություն չկար, եւ մենք բոլորս ցրվեցինք՝ յուրաքանչյուրս յուր մտքերի մեջ խորասուզված։

Անարդարություն

Անհիշելի ժամանակներից ի վեր ասում-խոսում ու գրում են անարդարության մասին, թերեւս, այն օրից ի վեր, ինչ առհասարակ մարդկությունն սկսել է խոսել ու գրել։ Իսկ թե դա ինչ բան է, ցայսօր տակավին պարզ չէ։ Այս հարցում հեշտ չէ համաձայնության գալը, քանզի

տվյալ դեպքում բանավեճը հանգեցվում է հեռանկարում գործնական արդյունքների եւ երբեք չի մղվում «անկողմնակալության» բավարար չափաբաժնով։ Ամեն ոք կամենում է, որ յուր հետ «արդարացի» վարվեն, եւ գանգատվում է «անարդարությունից», սակայն փորձում է այնպես մեկնաբանել արդարությունը, որ իսկույնեւեթ ակնհայտ դառնա յուր դեմ գործած անարդարությունը։ Ամեն մեկն էլ բավական ինքնահավան է, որպեսզի «արդարացի» դատողություններ անի այլոց նկատմամբ վերաբերմունքի մասին, սակայն բնավ չի նկատում, որ այլք վրդովվում են նրա կարծեցյալ «արդարությունից»։ Այսպես խնդիրն աղավաղվում է կրքերով ու պատվում նախապաշարմունքներով. սերունդներ են խճճվում այդ նախապաշարմունքների մեջ, իսկ երբեմն էլ նկատում ես, թե ինչպես է «արդարություն» բառը թունոտ ժպիտների տեղիք տալիս։

Մենք, սակայն, անձանձիր ձգտում ենք պահպանել կողմնակցությունն առ հին, ազնիվ գաղափարը, որը եւ հակադրում ենք ամենայն դասակարգային պայքարին ու ամենայն անարդար համահավասարեցմանը. մենք նաեւ համոզմունք ունենք առ այն, որ մեծ ապագան նրան է պատկանում։ Միայն թե ինչպե՞ս այն հասկանալ։

Ֆրանսիական հեղափոխությունը սովորեցրեց ու ժառանգաբար մարդկությանն ավանդեց մի վնասակար նախապաշարմունք, այն է՝ իբրեւ թե մարդիկ ի ծնե կամ ի բնե «հավասար» են, եւ ըստ այդմ էլ՝ նրանց նկատմամբ «միեւնույն» վերաբերմունքը պիտի դրսեւորել։ Ոչինչ այնպես չի խոչընդոտում մեր՝ այս խնդրի լուծմանը, ինչպես այս նախապաշարմունքը։ Բանն այն է, որ արդարության էությունը ոչ միանման մարդկանց նկատմամբ հենց ոչ միանման վերաբերմունք ունենալու մեջ է։

Եթե մարդիկ իրապես հավասար լինեին, ապա կյանքը խաղ ու պար կլիներ, իսկ արդարություն գտնելը եւ շրջանառության մեջ դնելը՝ շատ դյուրին։ Բավական էր միայն ասել՝ միանման մարդկանց՝ միանման բաժին, կամ բոլորին՝ ամեն ինչից հավասար։ Այդժամ արդարությունը կարելի կլիներ թվաբանորեն հիմնավորել եւ մեքենայաբար ստեղծել։ Եւ բոլորը գոհ կմնային, որովհետեւ մարդիկ կլինեին ոչ այլ ինչ, քան հավասար ատոմներ, յուրատեսակ մեքենայորեն ամեն կողմ գլորվող գնդիկներ՝ արտաքուստ եւ ներքուստ միանման հոգեկան նկարագրով։ Ինչ միամտություն, ինչ պարզունակություն, ինչ ծանծաղամտություն։ Հարյուր հիսուն տարի է անցել, եւ թվում է, թե այս տափակ մատերիալիզմը

վաղուց է, ինչ պետք է յուր դարն ապրած լիներ, եւ հանկարծ տեսնում ես արար աշխարհում ծառս եղած։

Իրականում մարդիկ հավասար չեն ո՛չ մարմնով, ո՛չ ոգով, ո՛չ էլ հոգով։ Նրանք ի ծնե տարբեր են սեռով, առողջությամբ եւ ուժով, միանգամայն տարբեր նախահակվածությամբ, ձիրքերով, բնազդներով ու ցանկություններով. նրանք անհամարժեք բաներ են ստեղծում, զանազան հոգեւոր մակարդակների պատկանում, եւ նրանց նկատմամբ (արդարության թելադրանքով) զանազան վերաբերմունք է պետք ցուցաբերել։ Հենց սա է արդարության հիմքն ու հիմնական բարդությունը. մարդիկ անսահմանորեն շատ են, եւ բոլորն էլ տարբեր. ի՞նչ անել, որպեսզի յուրաքանչյուրն ստանա յուր առանձնահատկության համեմատ։ Նրանք միանման չեն, ինչը նշանակում է, որ նրանց նկատմամբ հարկ է ոչ միանման վերաբերմունք որդեգրել, այն է՝ ամեն անգամ՝ ըստ իրենց կենդանի յուրահատկության։ Այլապես անարդարություն կառաջանա։

Արդ, արդարությունը բնավ հավասարություն չէ, ընդհակառակը՝ անհավասարություն է. բայց ամեն մի առարկայի հանդեպ կիրարկմամբ, այսպես ասած, «առարկայական անհավասարություն» է։ Ինչպես, ասենք, երեխային խնամել ու թույլին օգնել, հոգնածի նկատմամբ ներողամտություն դրսեւորել ու կամազուրկի նկատմամբ ավելի խիստ լինել, ազնիվ մարդուն ավելի շատ վստահել ու շատ զգույշ լինել բացբերանի նկատմամբ, շնորհալի մարդուց արդարացիորեն ավելին պահանջել ու հերոսին մեծարել։ Հետեւաբար, արդարությունը անհավասարության արվեստ է եւ բնորոշ է միայն ազնիվ հոգիներին։ Նա բարի սրտից ու կենդանի դիտողականությունից է բխում. նա իրականության սուր զգացողություն ունի. մերժում է մեքենայական եղանակը. նա ներըմբռնող (ինտուիտիվ) եւ հայեցողական է. նա կամենում է զգալով ներթափանցել եւ անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր դեպքի նկատմամբ։ Նրա մեջ ինչ-որ գեղարվեստական բան կա. ջանում է ըմբռնել մարդու էությունն ու ինքնատիպությունը եւ ըստ այդմ էլ վերաբերվել նրան։ Նա մարդուն դարձնում է նրբանկատ ու «հասարակական», տրամադրում չափի զգացողությանն ու միտում կարեկցանքին։ Արդարությունը հարազատ է պատշաճազգացողությանը (տակտին), բայց առավել եւս՝ պատասխանատվության զգացմանը։ Իսկ թե աշխարհի ինչ-որ մի անկյունում, հնարավոր է, երկնքում համընդհանուր համահավասարեցման կշեռք կա, որը ճշգրիտ կշռում է անհավասարությունը, ապա

արդարությունը՝ իբրեւ խիստ եւ ներողամիտ հսկիչ, այդ կշեռքի կողքին է կանգնած։ Կյանքում, սակայն, ամենից կարեւորը ոչ թե գտնված արդարությունն է, այլ համընդհանուր վստահությունն առ այն, որ նրան անկեղծորեն փափագում են ու ազնվորեն փնտրում։ Իսկ եթե դա իրականում այդպես է, այդժամ անարդարությունը հեշտ է տանել, քանզի այն ընկալում են իբրեւ «անցողիկ» մի բան եւ հարթում ինքնազոհողության պատրաստակամությամբ։ Այդժամ անարդարությունը դադարում է «վտանգավոր» լինելուց...

Արմատակտուր մարդիկ

Ժամանակակից աշխարհում մի մեծ չարիք կա, որ է՝ մարդու կտրվածությունն արմատներից։ Մարդիկ դեգերում են՝ ճակատագրի հողմերից քշված, ինչպես խունացած տերեւներ, ոչ մի տեղ չհաստատվելով, ոչ մի բանի հետ չսերտաճելով, ոչ մի տեղ բնակություն չհաստատելով, ոչ մի տեղ հավատարիմ չմնալով, ինչպես արտաքուստ, այնպես էլ ներքուստ։

Սրանց հասարակական առումով ունեզուրկ են հորջորջում, մշակութային-քաղաքական անդաստանում՝ հայրենազուրկներ, իսկ կրոնական իմաստով՝ կրոնազուրկ։ Արդյոք սա միեւնույն ծագմամբ ընդհանուր երեւույթ չէ՞։ Մի՞թե հողն է միաժամանակ կապվածություն առաջացնում աշխատանքի, բնության, Աստծու, ընտանիքի, ժողովրդի ու հայրենիքի հետ։

Երկու հասարակական տարրեր ընդդիմանում են մեկմեկու՝ հողի հետ կապված, արմատներ արձակած եւ նստակյաց աշխատավորներն ու հողի հետ չկապված, արմատակտուր, թափառիկ տարրը։ Ոչ ոք չի կարող առանց հողի. չէ՞ որ հողի հետ չկապվածին էլ է հող հարկավոր, եւ նույնիսկ գնչուն է այն օգտագործում յուր՝ թեկուզեւ վատ ձեւով։ Հարցը լոկ այսպես է դրվում՝ ինչպես ճիշտ հոգ տանել հողի մասին. ընդ որում, մենք միայն խոսում ենք հողի հետ մարդու կապվածության կամ դրա բացակայության մասին, դրա տեւականության ու հուսալիության մասին։ Ինչն է բնականը, բնազդաբար ճիշտը, տնտեսությունը հովանավորողը, բարոյապես դաստիարակողը, մշակույթ կերտողը, Հայրենիքի հետ կապողը, ազգայինը ձեւավորողը, հոգեւոր եւ կրոնական առումով զորացնողը։ Ինչն է մարդուն ազատ դարձնում ի Տեր, եւ ինչն է նրան ազատ դարձնում ավերածության քաոս սփռելու համար։

Հողի հետ չկապվածը, արմատներից զրկվածը հեռանում է բնությունից եւ կորցնում նրա հետ պարտավորեցնող ու բարերար հաղորդակցությունը, դառնում քաղաքի ու մեքենայի զոհը, ընկղմվում չափից ավելի մարդկայինի, ինքնահաճության, բանականության, դատարկության ճահճի մեջ։ Հողի հետ կապվածը կապված է մնում բնության հետ, հարազատանում նրա հետ, ներգրավվում նրա հավերժական ռիթմի մեջ։ Մտածում է իրատեսորեն, զգում ու հարգում նրա օրենքները, հարմարվում նրա կենսական կարիքներին ու նրա խորին իմաստությանը։ Բնության կենդանի գաղտնիքը նրան կենդանի աստվածատեսության կմղի եւ առ Աստված կառաջնորդի...

Հողի հետ չկապվածի բնազդն արմատակտուր է եւ անտերունչ. նա սեփական եսասիրության գերին է, ապրում է մեկ օրով՝ շնչահեղձ լինելով, առօրեականության հոգսերի մեջ ընկղմված ու նրանից էլ կախված, առանց անցյալի ու ներկայի, ամեն տեսակի իմաստակությունների եւ ուտոպիաների ականջալուր լինելով, որոնք խորթ են բնազդին։ Հողի հետ կապվածի բնազդն ունի յուր հաստատված եւ պահպանվող գործողությունների շրջանակը։ Նրա ինքնապահպանության բնազդը պայմանավորված, խթանված ու զորավոր է ժառանգականությամբ։ Նրա տնտեսությունը յուր համար միաժամանակ է՛ւ սրբազան անցյալ է, է՛ւ ստեղծագործ ներկա, է՛ւ լիահույս ապագա...

Յուր էության խորախոր պարունակներում հողի հետ չկապվածն իրեն ասես «իրավազուրկ» է զգում։ Անվստահությամբ կաշկանդված եւ յուր արհեստանոցը ժամանակավոր համարելով՝ նա աշխատանքի նկատմամբ էլ առանձնապես հետաքրքրություն չի ցուցաբերում. սառն ու իբրեւ օտարի է նրան նայում մեկուսացած ու անտարբեր շրջապատը։ Նա ի սրտե աշխատանքին չի տրվում, խնայում է յուր ուժերը, նա չի սիրում յուր աշխատանքը։ Իսկ ի՞նչ է աշխատանքը, ի՞նչ է կյանքն առանց սիրո... Հողի հետ կապվածն իրեն վստահ է զգում յուր իրավունքների եւ մասնավոր սեփականության տիրապետման՝ իրեն հատկացված ժամկետի մեջ։ Ուստի նա գործի մեջ է «ներդնում» իրեն, յուր աշխատանքը, յուր խնայողությունները. աշխատում է եռանդով, տրամադրվում որակի բարձրացմանը, ձգտում էլ ավելի լավը ստեղծել։ Սիրում է յուր հողակտորը, սիրում է յուր աշխատանքը, եւ այդ սիրուց բարգավաճում է յուր ձեռնարկությունը։ Ֆրիդրիխ Մեծն իրավացի էր, երբ ասում էր. «Մարդիկ իրենց էությամբ սերտաճում են միայն այն բանի հետ, ինչն իրենց է պատկանում»...

Արտադրության մեջ ներգրավված բանվորին իր աշխատանքը միայն կարգավարժում է. մեքենան նրան կաշկանդում ու մեքենայացնում է։ Իսկ հողի հետ կապվածին աշխատանքը կրթում է թե՛ հոգեւոր, թե՛ մարմնական առումներով։ Նա ասես համակված լինի յուր նախնիների շնչով, սովորում է հարգել եւ սիրել յուր հայրերին։ Նրա դաշտը սովորեցնում է իրեն բարեխղճորեն ու պատասխանատվությամբ աշխատել. նա մանկուց ի կատար է ածում բնության յուր վրա դրած պարտականությունը, եւ տարիքի հետ նրա համար սովորական է դառնում երեխաների ու թոռների մասին ստեղծագործաբար մտածելը։ Հողը մարդուն ընտանեկան ակութ, տուն է շնորհում, ուսուցանում նրան հոգ տանել հարազատ ընտանիքի մասին։ Այս առողջ բջիջներից է կազմված ժողովրդական մարմինը...

Հողի հետ չկապվածից խլված է այդ ժառանգական, կայուն «ուր»-ի երջանկությունը։ Նա ոչ մի տեղ հայրենի տուն չունի. նա ամեն տեղ «յուր տանն» է։ Սա դրոշմվում է նրա հոգու եւ սրտի մեջ։ Նրա բնավորությունը կերտվում ու կոփվում է հասարակական «կռիվներում» ու «նվաճումներում». այդ իսկ պատճառով նա հաճախ է լռվում ջղաձիգ նախանձոտ «մերժման» մեջ։ Միանգամայն այլ է հողին կառչածի նկարագիրը. նրա բնավորությունը, նկատի առնելով այն հանգամանքը, որ նա աշխատում է սեփական մղումով սեփական տնտեսությունում եւ վայելում այն, ինչն ինքն է իրեն թույլ տալիս, դառնում է ինքնուրույն։ Նրա իրավագիտակցությունը բխում է մասնավոր սեփականությունից։ Յուր հանգստավետ սեփական գոյության եւ արժանավոր ինքնորոշման արգասիքն է նրա ազատության առողջ զգացումը...

Որքա՜ն հաճախ, ա՜խ, որքա՜ն հաճախ է արմատներից զրկվածը կորցնում Հայրենիքի կենդանի զգացումը, քանզի Հայրենիքը «հայրերի երկիրն» է, որի մասին նա իրականում շատ քիչ բան գիտի։ Ընդհակառակը, երջանիկ է հողին կառչածը, որը գիտի, որ յուր հողակտորը պետական տարածքի կենդանի մասն է, եւ որին յուր Հայրենիքի տարածքները սեփական ընդարձակ հողակտոր են թվում։ Նա գիտի, որ յուր ժողովուրդն ահռելի կենդանի հոսք է, որի մեջ հոսում է նաեւ յուր տոհմի կյանքը։ Նա շնչում է յուր ժողովրդի հետ մեկտեղ, եւ յուր սեփական շնչառությունը երաշխավորում է յուր ժողովրդի կյանքը...

Մի՞թե հողի հետ կապվածությունը նպատակահարմար չէ, եւ մի՞թե այն հաճո չէ Աստծուն։ Արդյոք ամենայն «գործի» հիմքում վարելահողի

մշակումը չի ընկած։ Միթե առաջին մշակույթը[9] երկրագործականը չէ։ Չէ՞ որ, արդարեւ, անդ, ուր անկում է ապրում երկրագործական մշակույթը, վերանում է ամենայն նյութական եւ հոգեւոր կյանք, դադարում ամենայն ստեղծագործություն, եւ ամենայն մշակույթ դառնում երեւակայական...

Արմատներից կտրված լինելը մեծ վտանգ է արդի աշխարհի համար. կորուսյալ արմատներով կյանքը դառնում է հակաբնական, կորուսյալ արմատներով ոգին՝ անասված։ Ապա վրա է հասնում վախճանը. մարդկությունը կործանվում է։

Արդ, առանց Աստծու՝ մարդուն ոչինչ չի հաջողվի աշխարհում։

Ատելություն

Աշխարհում այնքան շատ պիղծ բաներ կան, որոնց դեմ ծառս եղած բարոյական վրդովմունքը, հոգեւոր նողկանքը, արդարացի ցասումը պատշաճ ու բնական են թվում։ Այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են, զորօրինակ՝ աղջիկների վաճառքը, հայրենադավությունը, չարանենգ զրպարտությունը կամ կանխահայտ սուտ ցուցմունքը, դրդում են վճռական դատապարտության՝ անպայման պատժիչ ու մաքրագործող գործառույթի ի կատար ածմամբ։

Սակայն ատելությունը...

Ատելությունը հոգեկան հիվանդություն է՝ դժբախտություն իր իսկ ատեցողի եւ իր շրջապատի համար։ Սույն հիվանդության էությունն այն է, որ մարդու սիրտը, այսինքն՝ յուր անձնական կյանքի զգայության կենտրոնը, համառություն է դրսեւորում մերժման մեջ, սմքում է ու քարանում։ Ընդ որում, նրա անձնավորության մեջ ամեն ինչ այլասերվում է՝ նրա մտքերը, նրա երեւակայությունը, նրա հետաքրքրասիրությունները, գնահատականները, կատակները, ծիծաղը, խոսքն ու անգամ ձեռագիրը եւ, իհարկե, ձգտումները, մտադրությունները, գործելակերպը։ Ամենայն ինչ ենթարկված է մերժման հոգեկան ջղաձգությանը։ Ամենայն ինչ տոգորված է ատելությամբ ու խարսխվում է նրա վրա։

Միայն այն ժամանակ է երջանիկ մարդը, երբ անձնատուր է լինում սիրույն, եւ այն էլ՝ անձնատուր է լինում ինքնամոռաց կերպով։ Իսկ ատելությունն այդ երջանկությունը դարձնում է անհնար։ Ատելությունը մերժող

[9] *Լատ.* cultura *բառից, որը նախեւառաջ նշանակում է հողի մշակում, ապա եւ դաստիարակություն, կրթություն, զարգացում, պաշտամունք։*

է, բաժանող, արհամարհող. նա երես է դարձնում, չարակամորեն գնահատում թշնամուն. նա չի կարող ու չի կամենում տրվել։ Նա յուր վարքագծով դաժան, սառն ու անդրդվելի է. սերը հաչս նրա «փափկամարմին» եւ «հիմար» բան է։ Այն չի կարող մոռացության տրվել, քանզի հավերժական քաղցի ու հավերժական ցավի տարատեսակ է։ Նման է վերքի, եւ այդ անբուժելի վերքն էլ ինքը փորփրում է՝ասես իր իսկ ցավից հաճույք ստանալով։ Նա ջղաձգություն է՝ ինքն իրեն դուր եկող, ուստի եւ չի ցանկանում ընդհատվել։ Այսու արգելակվում ու կաթվածահարվում է ատեցողի հուզական կյանքը։ Լճացումը՝ յուր ծանր, լարված, չարությամբ հագեցած մթնոլորտով, տիրում է նրա հոգուն։ Եւ միմիայն նուրբ հոգեկան լսողությունը կկարողանար կտտանքների ստորգետնյա բանտախցի թանձր օդի միջով որսալ տակավին չխեղդված սիրո կամացուկ հեծեծանքները։

Ատեցողն ախտահարված է յուր ատելի թշնամիով, ով էլ որ նա լինի՝ հակառակորդ, հասարակական դասակարգ, մեկ այլ ժողովուրդ կամ բովանդակ աշխարհը։ Ներքուստ նա չի կարող իրեն զատել յուր թշնամուց։ Նա նրան սեւ գույներով տեսնելու, նրա գործողությունները սեւ գույներով բացատրելու, նրան չարիք կամենալու անհագուրդ կարիք ունի. նա սեւեռվում է նրա «զազրելիության» վրա, հոգու մեջ ասես «փայփայում» նրա կործանումը, նվաստացնում է նրան, ստիպում տառապել ու վայելում նրա երեւակայական կործանումը։ Նրա երազանքը «պատիժն» է, նա վրիժառություն է փնտրում. յուր հոգին մարզում է չարության եւ զազրելիության մեջ։ Եւ այն, ինչ նա մտահղանում է, ինչ ցանկանում յուր թշնամուն, հենց դրանով էլ վարակում է սեփական հոգու բոլոր ծերպերը, աղճատում ու ապականում նախասկզբնական բնական բարությունը, կաթվածի ենթարկում նրա ստեղծագործական ուժերը։ Ատեցողը յուր անձի մեջ է կրում յուր անեծքն ու ճակատագիրը՝ ծառայելով ավերածություններ սփռելուն ու հասարակական օտարացմանը։ Նրա հոգեւոր հայացքը դառնում է աչառու եւ ոչ հստակ, եւ որքան շատ է անձնատուր լինում ատելությանը, այնքան առավել է հակվում զգայախաբությանը (հալյուցինացիային)։ Արդեն կորցնում է սթափ եւ իրատեսորեն քննելու ունակությունը, արդեն սկսում է ամենուր թշնամիներ փնտրել ու ամեն ինչ չափազանցնել. արդեն նրա հայացքում նշմարվում է սկիզբ առնող հետապնդման մոլագարությունը...

Ընդ որում, այն, ինչ հորդում է յուր ակներից, ատելության սեւաթույր ճառագայթներ են, որոնք թափանցելով այլ հոգիներից ներս՝ նրանց մեջ

չար բնազդներ են հարուցում։ Նա կասկածամտություն, քինախնդրություն եւ սպանություն է քարոզում։ Անդ, ուր նա «աշխատում» է, բոլոր բնական կապերը կտրվում են, անդ միաբանվում են նախանձորդները, թերարժեք եւ չարակամ մարդիկ։ Անդ, ուր նա «հաջողություն» ունի, անդ ամեն ինչ գնում է դեպի կործանում, անդ արյան հոտ է գալիս։

Այսօր աշխարհն ախտահարված է ատելությամբ։ Եթե մենք հուսալի հակաթույն չգտնենք եւ ինքներս էլ մեր հերթին սկսենք ատել մեզ ատողներին, ապա մենք էլ կթաղվենք ատելության մեջ։

Հավատարմություն

Ինչի՞ են ձեռնհաս մարդիկ առանց հավատարմության։ Ինչ կհաջողվի անել առանց նրա։ Ոչինչ։ Արդի աշխարհը, սակայն, այդ մասին շատ բան իմանալ չի կամենում։ Նա գովերգում է շահախնդիր քմահաճությունը, թուլացնում բոլոր կապերը, նա ծարավի է ազատագրյալ մարդու։ Նա զրկված է հավատարմությունից եւ չի էլ նկատում նրա բացակայությունը։ Շղթաներից համընդհանուր ազատագրումը, համատարած փոխադարձ դավաճանությունը կործանման են տանում մարդկությանը։

Ամենայն մեծամեծ բան շատ խորն է անթեղված ու հասունանում է դանդաղ. խոր զգացմունքների ու անսասան կամքի տեր մարդկանց խնդիր ունի. մարդիկ, որոնք իրենց համոզմունքների վերջնական հաստատման կարիքն ունեն, որոնք իրենց միայն այնժամ են լավ զգում, երբ գիտեն, որ իրենց սատարում է հավատարմությունը։ Շուտ միայն թերարժեքությունն է առաջանում, բայց փոխարենը՝ կարճ է ապրում, ինչպես մենօրիկ թիթեռնիկը, եւ չնչին է, ինչպես ավլած փոշին։ Մեծ գաղափարը, խորին մտորումները, երկարատեւ ջանքերը, իսկական հավատարմությունը նախադրյալների մի շղթա են, որի վրա խարսխվում է ստեղծագործական առումով ամենայն մեծավայելուչ բան, ինչպես ժողովրդի կյանքում, այնպես էլ առանձին վերցրած մարդկային հոգում։

Որքան հասարակ ու դիպուկ են հնչում այս խոսքերը. «Մնում եմ այնպիսին, ինչպիսին որ եմ. պիտի սիրեմ այն, ինչին հարել է սիրտս. եւ քանի դեռ կուրծքս լցվում է կյանքի շնչառությամբ, այդպես պիտի գործեմ»։ Ինչ անպաճույճ է թվում հավատարմության վարքագիծը։ Այդուհանդերձ՝ նա հազվադեպ հյուր է երկրի վրա։ Ինչո՞ւ։

Բանն այն է, որ հավատարմությունը ներսից է բխում՝ իբրեւ նախապայման ունենալով հոգու ամբողջականությունը, իսկ ժամանակակից մարդը հակված է փոշիացման, ինքնադիտարկման[10], խրատաբանության եւ ամենամերժ քննադատամոլության։ Եթե մարդն ամբողջական է, նա մեն-մի հոգեւոր կենտրոն ունի, որը եւ տնօրինում է նրա կյանքը. այդժամ նա հակված է հավատարմությանը։ Իսկ եթե փոշիացած է, ուրեմն նրա մեջ առկա են մի քանի՝ իրար հետ մրցող եւ ըստ այդմ էլ ուժասպառ եղած «կենտրոններ», որոնց միջեւ ընկած՝ նա տատանվում է, եւ որոնք մշտապես հյուծում ու դավաճանում են մեկմեկու։ Սակայն հավատարմությունն այն հոգեկան միասնությունն է, այն հոգեւոր «համապարփակությունն» է, հենց որից էլ ծնվում է հավատարիմի ներքին վստահությունը։

Հավատարիմ լինելու համար հարկ է մի բան սիրել, այսինքն՝ հարկ է առհասարակ սիրել իմանալ, այն էլ անմնացորդ կատարյալ սիրով։ Այս սերն է, որ տնօրինում է մարդուն։ Նա շաղկապում է մարդուն յուր սիրելի արժեքին, հետեւաբար՝ հավատարմությունը նվիրվածություն է արժեքներին։ Ով ոչինչ չի սիրում, դարուդադար չունեցող խռով հոգի է, պարապ-սարապ թրեւ եկող՝ ոչ մի բանի նկատմամբ հավատարմություն չդրսեւորելով ու ամեն ինչ ծախելով։ Ով անկեղծ է սիրում, «այլ կերպ չի էլ կարող». նրանում գերիշխում է ներքին օրենքը, սրբազան անհրաժեշտությունը։ Սույն անհրաժեշտությունը նրա համար բնավ բեռ չէ, ոչ էլ ստրկացնում է նրան, ո՛չ, բայց նա այլ կերպ չի էլ կամենում, նա որեւիցե այլ բան չի էլ ցանկանա եւ ոչ էլ կկարողանա։ Նա սույն անհրաժեշտությունն ընկալում է իբրեւ իր իսկ կողմից ընտրված ու բաղձալի բան՝ իբրեւ ինքնորոշում, իբրեւ իրական ազատություն։ Յուր համար այն թեթեւ ու «բնական» է եւ կրում է յուր հավատարմությունը՝ իբրեւ յուր կյանքի միակ ու բնական հնարավորություն...

Հավատարիմ մարդն ուժեղ բնավորության տեր է։ Ծանծաղ ու դատարկ մարդու համար հավատարմությունը «կխափանվի»։ Հավատարիմ մարդը հստակ ազնիվ սիրտ ունի։ Խառնակ, մռայլ սրտով առաջնորդվողը մի օր այս մռայլ քաոսում կկորցնի յուր հավատարմությունը։

---

[10] *Ինքնադիտարկում կամ ռեֆլեքսիա (լատ.* reflexio *— դեպի ետ անդրադարձում) — 1. Խորհրդածություն, վարանոտ խորհողություն, խոհածություն, վարանամտություն, ինքնաճանաչողություն։ 2. փիլ. Մարդու տեսական գործունեության ձեւ՝ ուղղված սեփական արարքների եւ նրանց օրենքների իմաստավորմանը։ Իսկ ռեֆլեքսել՝ նշանակում է գիտակցությունն ուղղել ինքն իրեն, խորհրդածել իր հոգեկան վիճակի մասին։*

Հավատարիմ մարդը հզոր, անսասան կամքի տեր է։ Ինչպե՞ս կարող է թուլակամ մարդը հավատարմություն պահպանել։ Հավատարիմը կեցության այն հոգեւոր ուժն է, այն չարտասանված երդումն ու ուխտն է, այն հենակետը, որը պահանջում էր Արքիմեդը՝ աշխարհը շուռ տալու համար։ Ներքին զորությունից ծագելով՝ ինքը հավատարմությունը, զորության աղբյուր է։ Նա զորանում է բնավորությամբ, արժանապատվությամբ, պատվով։ Նա Աստծու կայծն է, Աստծու օրհնությունը, նա ճշմարիտ զորացում է ի Տեր...

Այն ամենը, ինչ մարդկության պատմության մեջ վկայված է իբրեւ իսկապես ճշմարիտ ու «իսկական», ինչն ի վիճակի է եղել փարատել բոլոր կասկածներն ու վախերը, հաղթահարել վտանգները, ինչը խոր արմատներից է ավիշ ստացել ու ասպետավարի տառապել, ապրել է հավատարմության մեջ։ Այսպես ուրեմն, հավատարմությունը մեզ համար Ե՛ւ մեր նախնիների կանչն է, Ե՛ւ մեր ուխտը մեր թոռներին. իսկ մեզ համար սույն բառը հնչում է իբրեւ խոր համոզմունք, սփոփանք եւ հանգստություն։ Իսկ ով, իրոք, հավատարիմ է, կկարողանա ինչ-որ բան ավանդել հավատարմության երանության ու գերագույն երջանկության մասին։

Ռուսերենից թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ